Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ում

«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն նախատեսված է ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Օրենքով նախատեսված է, որ ակադեմիական քաղաքը կապահովի ուսումնական հաստատությունների, գիտական ու արտադրական կազմակերպությունների միջև ցանցային, սիներգիական համագործակցության ընդլայնումը՝ ներառելով ժամանակակից վիրտուալ, սոցիալական, ինչպես նաև ֆիզիկական ենթակառուցվածքները: Ակադեմիական քաղաքի հիմնումը նախատեսված է նաև ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով, ըստ որի՝ բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումները միտված են լինելու անհրաժեշտ ենթակառուցվածքների վերանայման միջոցով ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական գրավիչ միջավայր ապահովելուն. այս իմաստով ակադեմիական քաղաք հիմնելու մտահղացումն ունի ռազմավարական նշանակություն:

Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքները կազմակերպելու, համակարգելու և վերահսկելու հրամայականով, ինչի համար առավել նպատակահարմար կազմակերպական ձև է ընտրվել պետության կողմից հիմնադրամի ստեղծումը:

2. **Առաջարկվող կարգավորման բնույթը**

Ելնելով նրանից, որ ակադեմիական քաղաքը հանդիսանում է Օրենքով սահմանված մի շարք կարևորագույն թիրախների ապահովման առանցքային միջոց, առաջարկվում է ստեղծել «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ, որը պետք է իրականացնի՝

- ակադեմիական քաղաքի նախագծումն ու կառուցումը՝ որպես որակյալ կրթության և հետազոտության համար արդիական միջավայր,

- համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցումը, պահպանումը և բարելավումը,
- հետազոտությունը և ուսումը խթանող, գրավիչ, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծումը՝ հաշվի առնելով ոլորտների արդի և զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները,
- մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաև ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկական միջավայրի ստեղծումը,
- ակադեմիական քաղաքի հայեցակարգից բխող այլ գործողությունների իրականացումը:

3. <u>Ակնկալվող արդյունքը</u>

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը կնպաստի ակադեմիական քաղաքի հայեցակարգի իրականացման արդյունավետության բարձրացմանը, միաժամանակ, կիրականացնի ակադեմիական քաղաքի նախագծումն ու կառուցումը՝ որպես որակյալ կրթության և հետազոտության համար արդիական միջավայր, համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցումը, պահպանումը և բարելավումը, հետազոտությունը և ուսումը խթանող, գրավիչ, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծումը՝ հաշվի առնելով ոլորտների արդի և զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները, մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաև ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկական միջավայրի ստեղծումը:

4. <u>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվող փոփոխությունների մասին</u>

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական կամ տեղական

ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

5. <u>Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի նախագծերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին</u>

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

6. <u>Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ</u>

«Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է՝

- Օրենքի հավելվածի 82-րդ կետի 4)-րդ ենթակետի դ. պարբերությունից,

- Օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշման հավելված 1-ի՝ Նպատակ 2 «Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում» 2.2 «Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» մասի 2.2.2 «Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ» կետից,

- 2021-2026 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» կետի 4.3 «Կրթություն» մասով սահմանված՝ բարձրագույն կրթության ոլորտում ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական գրավիչ միջավայր ապահովելու համար ակադեմիական քաղաք հիմնելու ռազմավարական նպատակից,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Կրթություն» բաժնի 20-րդ՝ «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում» կետի և նույն

հավելվածի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 1.7 «Խոշոր ներդրումային ծրագրերի հայեցակարգի հաստատում վարչապետի աշխատակազմ, հաստատման դեպքում ճանապարհային քարտեզի մշակում և իրագործում» ենթակետի 1-ին մասով՝ «Ակադեմիական քաղաք - Նպատակ է հետապնդում կառուցել համալսարանական քաղաք-համայնք (Երևանից դուրս)՝ համալրված համալսարանական բնակչությամբ, որտեղ տեղափոխվելու են հիմնական քոլեջները և համալսարանները: Այն դառնալու է կրթական հաբ, որն իր մեջ ներառելու է տարբեր ակադեմիական ոլորտներ և ծրագրեր» ակնկալվող արդյունքի կատարման տրամաբանությունից: